ՆԱԽԱԳԻԾ 34

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

N_____- Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N 1522-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխան Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. <<Հայաստանի Հանրապետության 2010 թվականի պետական բյուջեի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի N1 հավելվածի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի դեկտեմբերի 24-ի N1522-Ն որոշման N5 հավելվածի 04 բաժնի 09 խմբի 01 դասի <<05. Մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն>> սյունակի <<Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության Հայաստանի փրկարար ծառայություն>> բառերը փոխարինել <<Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարություն>> բառերով.

2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի դեկտեմբերի 24-ի N1522-Ն որոշման N13 հավելվածում կատարել փոփոխություններ և լրացումներ՝ համաձայն հավելվածի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից :

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված
ՀՀ կառավարության 2010 թվականի
_____-ի N_____-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N 1522-Ն ՈՐՈՇՄԱՆ N 13 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Անվանումը	Չափման միավորը	Ցուցանիշների փոփոխություն (ավելացումները բերված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում)		Գնման ձևը	Պայմանագրերի	
		Քանակը	Գումարը (հազար դրամով)		Կնքման ժամկետը	Կատարման վերջնաժամկետը
ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն			**60 000,0**			
Բաժին N 01 Խումբ N 01 Դաս N 01 Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում			**60 000,0**			
Վարչական օբյեկտների հիմնանորոգում			**60 000,0**			
Բնակելի և ոչ բնակելի շենքերի հիմնական նորոգում	դրամ	1,0	**60 000,0**	ՄԲԱ	նոյեմբեր	դեկտեմբեր

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Հայաստանի Հանրապետության 2010 թվականի պետական բյուջեում վերաբաշխում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի դեկտեմբերի 24-ի N 1522-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի

Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի նոյեմբերի 4-ի N1432-Ն որոշմամբ փոփոխություններ են կատարվել Հայաստանի Հանրապետության 2010 թվականի պետական բյուջեում վերաբաշխում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի դեկտեմբերի 24-ի N 1522-Ն որոշման մեջ:

Այդ փոփոխությունների նպատակը ավելի քան 20 տարի չվերոնորոգված, ք. Երևան, Դավիթաշենի 4-րդ թաղամաս, Ա. Միկոյան 109/8 հասցեում գտնվող վարչական շենքը վերանորոգելու համար վերաբաշխման միջոցով 60 մլն դրամի հատկացումն է:

Սույն նախագիծը ներկայացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի նոյեմբերի 4-ի N1432-Ն որոշմամբ կատարված փոփոխությունների արդյունքում 60 մլն դրամի հատկացումը և ծախսն ապահովելու նպատակով:

ՆԱԽԱՐԱՐ Ա. ԵՐԻՑՅԱՆ